ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: THE KINGDOM OF GOD

ՀԿ-ում ՅԱՀՎԵՆ (YHWH) համարվում էր Իսրայելի Թագավոր (տես՝ 1 Թագ.8:7, Սաղ.10:16, 24:7-9, 29:10, 44:4, 89:18, 95:3, Ես. 43:15, 44:4,6), իսկ Մեսիան՝ իդեալական թագավոր (տես՝ Սաղ.2:6, Ես.9:6-7, 11:1-5): Բեթլեհեմում Հիսուսի ծննդյամբ (մ.թ.ա. 6-4) Աստծո Թագավորությունը նոր իշխանությամբ և փրկությամբ (նոր ուխտ, տես՝ Երեմ.31:31-34, Եզեկ.36:27-36) մուտք գործեց մարդկության պատմություն: Հովհաննես Մկրտիչը հռչակում էր այդ թագավորության մոտալուտ լինելը (տես՝ Մատթ.3:2, Մարկ.1:15): Հիսուսը պարզ սովորեցնում էր, որ Թագավորությունը Իր և Իր ուսմունքի մեջ է (տես՝ Մատթ.4:17,23, 9:35, 10:7, 11:11-12, 12:28, 16:19, Մարկ.12:34, Ղուկ.10:9,11, 11:20, 12:31-32, 16:16, 17:21): Մինչդեռ այդ Թագավորությունը նաև ապագա Թագավորություն է (տես՝ Մատթ. 16:28, 24:14, 26:29, Մարկ.9:1, Ղուկ.21:31, 22:16,18):

Մարկոսի և Ղուկասի Սինոպտիկ զուգահեռների մեջ հանդիպում ենք «Աստծո Թագավորություն» արտահայտությունը: Հիսուսի ուսմունքների մեջ մեծ տարածում գտած այս թեման բովանդակում է Աստծո մարդկանց սրտերում տիրելու իմաստը, որը մի օր կտարածվի ամբողջ աշխարհով մեկ: Սա արտացոլվում է Մատթ.6:10-ում Հիսուսի աղոթքի մեջ: Մատթեոսը, գրելով հրեաներին, նախընտրել է մի արտահայտություն, որտեղ չի գործածվում Աստծո անունը (Երկնքի Արքայություն), մինչդեռ Մարկոսն ու Ղուկասը՝ գրելով հեթանոսներին, կիրառել են տարածված անվանումը՝ օգտագործելով աստվածության անունը:

Սա կարևոր արտահայտություն է Սինոպտիկ՝ համանման Ավետարաններում: Հիսուսի առաջին և վերջին քարոզները և Նրա առակների մեծամասնությունը գործ ունեին այս թեմայի հետ: Այժմ այն վերաբերում է Աստծո մարդկանց սրտերում թագավորելուն: Զարմանալի է, որ Հովհաննեսը այս արտահայտությունը գործածում է միայն երկու անգամ (և երբեք չի գործածում Հիսուսի առակների մեջ): Հովհաննեսի Ավետարանում «հավիտենական կյանք» խոսքն է բանալի փոխաբերությունը:

Այս արտահայտության հետ կապված լարվածություն է ստեղծվում Հիսուսի երկու գալստյան պատճառով: ՀԿ-ը կենտրոնանում է միայն Աստծո Մեսիայի մի գալստյան վրա՝ ռազմական, դատաստանի, փառավոր գալստյան, սակայն ՆԿ-ը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես Եսայի 53-ի Չարչարված Ծառան և Զաք.9:9-ի խոնարհ Թագավորը: Երկու հրեական դարաշրջանները՝ ամբարշտության դարաշրջանը և արդարության նոր դարաշրջանը, մասամբ համընկնում են: Հիսուսը ներկայումս տիրում է հավատացյալների սրտերում, սակայն մի օր տիրելու է ամբողջ ստեղծագործության վրա: Նա վերադառնալու է ՀԿ-ի կանխատեսության համաձայն: Հավատացյալները ապրում են Աստծո Թագավորության «ներկայում» ի հակադրություն դրա «ապագայի» (տես՝ Գորդն Դ. Ֆիի և Դուգլաս Ստյուարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 131-134 /Gordon D. Fee and Douglas Stuart's *How to Read The Bible For All Its Worth/*):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԱՐՉԱՐՎՈՂ ՄԵՍԻԱ</u>

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻՔ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԸ</u>